ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-9/14-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13 **.09.2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ալեքսանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 25.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/14-4 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրով նախատեսված «Գնորդի» բանկային վավերապայմաններում կատարել փոփոխություն և ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900011144129 հաշվի համարի փոխարեն սահմանել N 900011006500 հաշվի համարը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011006500 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	**«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ** **ք. Արմավիր, Սայաթ-Նովա 33** **«Ինեկոբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 205002223860** **ՀՎՀՀ 04414816** **տնօրեն** **Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2017թ-ի մայիսի 25-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-9/14-4 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2017թ-ի սեպտեմբերի 13-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հաշվի առնելով «Գնորդի» մոտ ծագած անհրաժեշտությունը Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրով նախատեսված «Գնորդի» բանկային վավերապայմաններում կատարել փոփոխություն և ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900011144129 հաշվի համարի փոխարեն սահմանել N 900011006500 հաշվի համարը:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.4 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ԱՇԾ ԳՓՁ բաժնի պետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-66-24-94:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: